



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 206 -Ա
« 17 » ՀՈՒՆԻՍԻ 2024Թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱԶՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 231 որոշմամբ հաստատված «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 60-րդ կետով և հիմք ընդունելով Ռոման Առաքելյանի 2024 թվականի հունիսի 17-ի գրությունը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Ռոման Առաքելյանի անաշխատունակության մեջ գտնվելու ընթացքում նրա լիազորությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրեն Անուշ Թարվերդյանի վրա:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X 
ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ
Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100
Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր